**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 16.02.2024թ. հ. 12-2024 գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության աշխատանքային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է թվով 9 գետնանցումներում վերելակների տեղադրման աշխատանքներ:

Փակ շուկայի հարևանությամբ և «Արգենտինյան Հանրապետություն» հ.76 հիմնական դպրոցի հարևանությամբ գտնվող գետնանցումներում արդեն իսկ տեղադրված են վերելակներ:

Ներկայումս աշխատանքներ են ընթանում Կոմիտասի պողոտայի շուկայի հարևանությամբ գտնվող գետնանցումում վերելակներ տեղադրելու ուղղությամբ, որոնք ներկայումս ավարտական փուլում են:

Վերելակներ տեղադրելու նախապատրաստական աշխատանքներ են ընթանում նաև հետևյալ հասցեներում.

«Կիլիկիա» ավտոկայանի հարևանությամբ գտնվող գետնանցում·

Գարեգին Նժդեհի փողոց - «Հայրենիք» առևտրի կենտրոնի (Գարեգին Նժդեհի փող., 17) հարևանությամբ գտնվող գետնանցում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**